ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Կենսաբանություն

Թեմա Մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրությունը որպես էկոլոգիական հիմնախնդիր: Էկոլոգիական դաստիարակություն

Կատարող Մկրտչյան Լիլիթ
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Սամվել Պիպոյան
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն…….3

Մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրությունը որպես էկոլոգիական հիմնախնդիր: Էկոլոգիականդաստիարակություն……...…..4

Եզրակացություն……18

Օգտագործված գրականության ցանկ……19

Ներածություն

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Մարդկության տունը Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Էկոլոգիական դաստիարակությունն ու էկոլոգիական կրթությունը ներկա ժամանակներում գոյապահպանման պահանջ է:

Այսօր մասնագետները կարևորելով էկոլոգիական կրթությունը կատարում են բազմաթիվ հետազոտություններ: Կրթական տարբեր ոլորտներում ներառված է էկոլոգիական կրթությունը, որի նպատակն է ձևավորել էկոլոգիական գիտակցություն: Դպրոցներում աշակերտների էկոլոգիական դաստիարակության խնդրում շատ կարևոր է արտադասարանական պարապմունքների և էքսկուրսիաների կազմակերպումը, որի ընթացքում աշակերտների մոտ զարգանում է սեր՝ դեպի բնությունը, հետաքրքրություն է առաջանում մոտիկից ավելի լավ ճանաչել բնությունը, մասնակցել բնության պահպանության խնդիրների լուծմանը: Էկոլոգիական դաստիարակությունը պետք է լինի շարունակական, քանի որ էկոլոգիական խնդիրները բազմաթիվ են, որոնք պահանջում են հրատապ լուծում և ամբողջ մարդկության ջանքերը: Այլ կերպ՝ դրանց անվանում են համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներ: Յուրաքանչյուրիս քաղաքական պարտքն է պահպանել բնությունը, վերականգնել խաթարված էկոլոգիական համակարգերը: Բայց մեզանից ամեն մեկը ավելի քիչ միջոցներ ու հնարավորություններ ունի, քան ամբողջ համայնքը, պետական կառույցները, միջազգային կազմակերպությունները:

Մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրությունը որպես էկոլոգիական հիմնախնդիր:

Էկոլոգիական դաստիարակություն

Անձի էկոլոգիական կրթությունը, մշակույթը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է մարդ-հասարակություն բնություն փոխազդեցության պահանջներից: Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: Շատ փիլիսոփաներ, գիտնականներ, քաղաքագետներ, իրենց աշխատություններում վերլուծում են պատճառները և ելք են որոնում էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու համար: Բնապահպանական խնդիրների լուծման համար բավարար չէ բնօգտագործման գործընթացների իրավական և տնտեսական կարգավորումը, այլ անհրաժեշտ է մարդկային գործունեության մեջ նոր արժեքանորմատիվային հարաբերությունների յուրացում, որը հնարավորություն է ստեղծում էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար: Կարելի է ասել, որ դաստիարակությունը կոչված է ոչ միայն անցյալի արժեքները փոխանցելու, այլև դպրոցականներին նախապատրաստելու ապագայի ստեղծագործական ընկալմանն ու կերտմանը: Դաստիարակությունը առաջին հերթին պետք է ապահովի համապատասխան ունակությունների, արժեքային կողմնորոշումների, վարքագծի և բնություն աշխարհի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը: Ներկա ժամանակում գնալով խորանում են ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները, որոնք արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների սնմամբ:

Մթնոլորտի և շրջական միջավայրի աղտոտվածության մասին խոսելիս՝ առաջին հերթին պետք է հասկանալ այս երկու բառերի կարևորությունն ու նշանակությունը մեր կյանքում:

Մթնոլորտ (հուն. ՝ ατμός - «գոլորշի» և σφαῖρα -«ոլորտ»), երկնային մարմնի գազային ծածկ, որը նրա շուրջը պահպանվում է ձգողականության շնորհիվ: Քանի որ մթնոլորտի և միջմոլորակային տարածությունների միջև չկա հստակ

սահման, ապա ընդունված է մթնոլորտ համարել գազային այն միջավայրը, որը պտտվում է մոլորակի հետ զուգընթաց որպես մեկ ամբողջություն:

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է:

Այստեղից կարող ենք առանձնացնել այն կարևոր գործոնները, որոնք ազդում են մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտման վրա:

- **Մթնոլորտի աղտոտումը դա**
- քիմիական նյութերի,
- ֆիզիկական ազդակների,

- կենսաբանական միկրոօրգանիզմների թափանցումն ու կուտակումն է մթնոլորտում, որոնք օդի հիմնական բաղադրամասեր չեն կամ գերազանցում են դրանց թույլատրելի չափաքանակները:
- Այն կարող է առաջացնել հիվանդություններ, ալերգիաներ կամ մարդկանց մահվան հասցնել:

Մթնոլորտային աղտոտման տեսակները

- Բնական աղտոտում նկար 1 2 3 4
- Մարդածին աղտոտում նկար 1 2 3 4
- Մթնոլորտային աղտոտումը ըստ տեսակի
- Տեղային
- Տարածաշրջանային
- Խոշորամասշտաբ
- Մթնոլորտի աղտոտումը Հայաստանում



Բնական աղտոտում

- Մթնոլորտային օդի բնական աղտոտման պատճառ են բնական գործընթացները՝
- հրաբխային ժայթքումները,
- լեռնային ապարների հողմահարումը,
- քամու առաջացրած հողերի էրոզիան,
- բույսերի «զանգվածային ծաղկումը»,
- անտառային և տափաստանային հրդեհների ծուխը:

նկար 1.



նկար 2.

նկար 3.

նկար 4.

Մարդածին աղտոտում

Մարդածին աղտոտումը կապված է մարդու գործունեության ընթացքում տարբեր աղտոտիչ նյութերի արտանետման հետ:

Մթնոլորտային օդի մարդածին աղտոտումն իր ծավալներով բազմաթիվ անգամ գերազանցում է բնական աղտոտմանը:

Մթնոլորտային աղտոտումը ըստ տեսակի



Տեղային աղտոտում

- Տեղային աղտոտումը բնորոշվում է ոչ մեծ տարածքներում (բնակավայրերի, արդյունաբերական ձեռնարկությունների և դրանց հարակից տարածքներ) աղտոտիչ նյութերի բարձր պարունակությամբ:

Տարածաշրջանային աղտոտում

- Տարածաշրջանային աղտոտումն ընդգրկում է խոշոր տարածքներ:

Խոշորամասշտաբ աղտոտումները

- Խոշորամասշտաբ կամ համամոլորակային աղտոտումները կապված է մթնոլորտի վիճակի ընդհանուր փոփոխության հետ:

Մթնոլորտի աղտոտումը Հայաստանում

ՀՀ-ում արտանետումների մոտ 95%-ը բաժին է ընկնում Երևանի և Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի մարզերի ձեռնարկություններին ու տրանսպորտին:

Հայաստանի Հանրապետությունում մինչև 1992 թվականը օդի հիմնական աղտոտման աղբյուրներն էին էներգետիկայի ոլորտը, գունավոր մետալուրգիայի, արդյունաբերական շինանյութերի, քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները: Տնտեսության ծանր ճգնաժամային վիճակի հետևանքով դադարեցվեցին աշխատանքները Նաիրիտ գիտաարտադրական միավորումում, Հայկական ատոմային էլեկտրակայանում, Ալավերդու լեռնամետալուրգիական և այլ ձեռնարկություններում: Դրա հետևանքով խիստ նվազեցին մթնոլորտային արտանետումների ծավալները:



Էկոլոգիական դաստիարակության խնդիրները

Ա. դպրոցականների կողմից այն առաջատար գաղափարների և հիմնական հասկացությունների և գիտելիքների յուրացումը, որոնց հիման վրա բնության օրենքներին համապատասխան որաշակիացվում է մարդու ներգործությունը բնության վրա

Բ. բնության սոցիալ-տնտեսական, առողջարահիգենիկ և հոգևոր գեղագիտական արժեքների իմացությունը

Գ. սովորողների բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը

Դ. բնական միջավայրի ստեղծագործական վերափոխման ունակությունների մշակումը՝ բնության հավասարակշռությունը վերականգնելու առումով, բնապահպանական գաղափարների քարոզչությունը Ե. բնության նկատմամբ ակտիվ դիրքորոշման, վարքի նորմաների պահպանումը, պարտքի և պատասխանատվության

Գրականության ակնարկ

Մի շարք գիտնականներ (Վ.Ա. Կոպտյուգ, Ի.Դ. Լապտեև, Ն.Դ.Ռեյմերս) էկոլոգիական հիմնախնդիրներն են համարում՝

1. կենսոլորտային կենսաբազմազանության կրճատումը,
2. մարդկանց առողջական վիճակի վատացումը,
3. շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով և տեղեկատվությամբ,
4. կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը:

Նշված հիմնախնդիրները չեն կարող շրջանցել կրթության ոլորտը: Դիտարկելով մարդու էկոլոգիական աշխարհայացքի և էկոլոգիական մշակույթի խնդիրը՝ մենք անցնում ենք նրա հոգևոր ներաշխարհը,ներխուժում նրա՝ հասարակության հետ ունեցած հարաբերությունների ոլորտը, ընդհարվում նրա պարտականությանը՝ նրա այսօրվա իր վարքագիծը ստորադասելով ապագա սերունդների ապահովման խնդիրը:

Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է .

1. Բնության ,նրա հարստության,շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:
2. Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ, որպես ամենօրյա վարքի կանոն:

Սակայն այս սահմանումները լիարժեքորեն չեն արտահայտում էկոլոգիական դաստիարակության բովանդակությունն ու նպատակը:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահատկությունները.

ա) բազմատեսանկյունությունը

բ) համալիրությունը

գ) անձնային-անհատական բնույթը:

Այսպիսով էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը,

գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակման, դա էլ իր հերթին հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը:

Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների՝ բնագիտության, բուսաբանության, կենսաբանության, աշխարհագրության, գրականության և այլ առարկաների միջոցով:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանը, որը առաջ է բերել բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ, կենսոլորտի հետագա զարգացումը կախման մեջ է դնում մարդուց: Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի

Եզրակացություն

Էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու 18 գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին: Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին: Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի:

Որպես օրինակ՝ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները՝ այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. < <Բնօգտագործում և բնապահպանություն >>- 1999 Ա. Գասպարյան, Ռ . Մկրտչյան, Լ. Վալեսյան
2. < <Շրջակա միջավայր և բնապահպանություն>>- 2010թ. Մելանյա Դավթյան Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
3. Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., //Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում//, Երևան, 2003թ.:
4. Ասատրյան Լ.Թ., //Էկոլոգիական դաստիարակության հիմունքները//, Երևան,
5. Հովսեփյան , Մարուխյան , «Անձի էկոլոգիական կուլտուրա», Երևան, 2005թ.: